Հ.Յ.Դ. ԲՅՈՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ A.R.F. BURO LIBRARY

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Փետրվար, 1892 թ.

«Դրօշակի» 1 եւ 2 համարներում բերված էին թէ Դաշնակցութեան յեղափոխական գործունէութիւնը առաջնորդող գլխաւոր սկզբունքները եւ թէ նորա ընթացիկ կուլ ընդհանուր նախագիծը։

Այժմ կարեւոր ենք համարում համառօտապէս հիմնաւորել ընդհանուր ձեւով բերուած սկզբունքները եւ առաջ բերել մեր այն պահանջները, որ ձեռք պիտի բերվին ապստամբական ճանապարհով։

Պատմութիւնը մեզ ուսուցանում է, թէ ամէն մի հասարակական դրութիւն, հետեւանք լինելով նախընթաց պայմանների միեւնոյն ժամանակ պատճառ է այն ապագայի, որը երեւան է գալու վաղը։

Ինչպէս ներկայիս մէջ կարող ենք գտնել անցեալի բոլոր գլխաւոր եւ ապրելու արժանի կողմերը. նոյնպէս կարող ենք ասել, որ ապագայ կազմակերպութեան բոլոր տարրերը կարող են զարգանալ միայն ներկայից։ Հետեւաբար այս կամ այն հասարակական հաստատութիւնները իրագործելու համար բաւական չէ ունենալ կամք. նոյն իսկ կարողութիւն ձեւելու հասարակական կազմակերպութիւնը այս կամ այն մոդելից (բնական թէ իդէալական). դորա համար անհրաժեշտ է, իբրեւ հիմք, վերցնել ժամանակին ու տեղին յատուկ այն պայմանները, որոնք համապատասխանելով հասարակական բարօրութեան պահանջներին, նաեւ ընդհանուր կերպով որոշում են մօտիկ ապագան։

Տնտեսական (ինչպէս եւ հասարակական ու պատմական) խնդիրներ չօշափելիս, ասում էինք մենք Դրօշակի առաջին համարում, պէտք է ղեկավարվել երկրի կուլտուրայով եւ նրա ազգային ու պատմական առանձնայատկութիւններով։

Սա որոշ օրէնք է, որը՝ սկսած Կոնտից մի շարք փայլուն ուսումնականների չնորհիւ ընդհանրացաւ բոլոր գիտութիւնների վերաբերմամբ եւ որը յայտնի է էվոլիւցիական օրէնքի անուան տակ։ Էվոլիւցիական տեսակէտը զարգանալով-զարգանալով՝ բռնեց նաեւ փառաւոր տեղ ժամանակակից քաղաքական կուսակցութիւնների ծրագրերում։ Դեռ մեր օրերում ամբողջ Գերմանիայի ռամկավարական կուսակցութիւնը իր ամենասիրելի եւ ամենաեռանդուն գործիչ Բէբելի բերանով բաղմատեսակ պէդանտների հասցէին ասեց հետեւեալ խօսքերը. «Մինչդեռ ամբողջ Եւրոպայում մենք չենք կարող ասել, ինչ քաղաքական փոփոխութիւններ կը լինին վաղը, մեզանից պահանջում են մանրամասնօրէն նկարագրել այն ապագայ կազմակերպութիւնը՝ որի միայն կերպարանքը կարող ենք նշմարել այժմ». Նոյն միտքը յայտնեց եւ Բրիւսելում համազգային ռամկասոցիալիստական ժողովը։

Ինչպէս յայտնի է, միակ իրական եւ գլխաւոր պահանջը, որը ընդունուած է այդ ժողովում՝ դա 8-ժամեայ աշխատանքի խնդիրն է։ Լինելով գործի եւ ոչ թղթի մարդ, Բէբելը անկարող է հետեւել 30-ական եւ 60-ական թուականների յեղափոխականներին եւ պահանջել այն, ինչ որ միայն իր կուսակցութեան կամքի մէջն է։ Կօնդրեսը՝ բաղկացած լինելով զարգացած մարդկանցից՝ իր կուսակցութեան ապրելու եւ զարգանալու համար դիմում է այնպիսի պահանջների, որոնց դրօշակի տակը կարող է միանալ եւրոպական ամբողջ բանւոր դասակարգը եւ որոնք իրագործելի են հէնց այժմ։

Ահա այն պատճառները որոնք վաղւայ կազմակերպութեան տեսակետից ստիպում են մեզ մեր ոյժերը կենտրօնացնել ներկայ հանգամանքների վրայ։ Ինչպէս հեռաւոր անցեալին, նոյնպէս եւ իդէալական ապագային, մենք տալիս ենք երկրորդական նշանակութիւն։

Ամէն մի օր Հայաստանի այս կամ այն անկիւնում կատարվում են ոգեւորութիւններ, բռնի կրօնափոխութիւններ եւ ուրիշ հազար ու մի տեսակ բարբարոսութիւններ։ Ի հարկէ, այս բոլորի մէջ կառավարութիւնը ունեցել է մեծ դեր, սակայն անկարելի է անուշադիր լինել եւ դեպի միւս պատճառները։

Քիւրդ ազգաբնակութեան մեծ մասը, բաժանուած լինելով ցեղերի՝ դեռ եւս պարապում է խաշնարածութեամբ, վարում է կիսաթափառական կեանք: Նրա ձիաումները, բարոյական սկզբունքները բոլորովին տարբերվում են այն վարք ու բարքից, որոնք առաջ են գալիս եւ զարգանում, երբ մարդս սկսում է պարապել հողագործութեամբ, որոշ տեղում մշտական բնակութիւն է հաստատում, ենթարկվում է հասարակական կեանքի պահանջներին: Բայց եթէ քիւրդը, իբրեւ բարոյականութեան հիմք, ընդունում է ցեղի շահերը, վրէժխնդրութիւնն եւ քաջութիւնը. եթէ նա չի հասկանում անձի սրբութիւնը, արհամարանքով է վերաբերվում դէպի հողագործական ծանր աշխատանքը, դէպի այն բոլորը, ինչ բղխում է աշխատանքի, քրտինքի դաղափարից, — խաղաղ մշակ հայն իր կացութեան վէմն ու տաճարը կառուցանում է աշխատանքի վրայ, ղեկավարվում է ազգային շահերով եւ ընդունում է այն բոլոր կապերի ու պարտականութիւնների անհրաժեշտութիւնը, որոնք հետեւանք են աւելի բարդ հասարակական պայմանների:

Այդպիսով սկսվում է մրցումն, պատերազմ երկու տարբեր շրջանների պատկանող ժողովուրդների մէջ: Կասկած չը կայ, որ ապագայում ցեղական սկզբունքը պիտի ոչնչանայ: Ինչպէս որսորդութեան շրջանից մարդս դիմեց խաշնարածութեան՝ նոյնպէս անհրաժեշտ է ներկայումս, որ քիւրդը դառնայ հաստատաբնակ, դիմէ հողագործութեանը: Մինչեւ այս պատմական բարեշրջութիւնը չը կատարվի, խաղաղութիւնը չի հաստատվիլ, չի էլ կարող հաստատվիլ Հայաստանում: Սպանութիւնները եւ աւազակութիւնները թէեւ կը մեղմանան, բայց կը պահեն իրենց քրոնիկական բնաւորութիւնը: Հասկանալի է դառնում, որ քաղաքակրթութեան շահերը պահանջում էին ոյժ տալ հողագործի ձգտումներին, ապահովել նրա կեանքը, կայքը, աշխատանքը եւ խստիւ հետեւիլ օրինաղանցներին: Այդպէս վարվելով կառավարութիւնը կատարած կը լինէր իր պարտքը եւ աշխէրէթների քայքայման հետ միասին կ'ապահովէր լուսաւորութեան տարածումը: Այո, «մեր կռիւը տաճիկ կառավարութեան դէմ ոչ միայն ազգային կռիւ է, այլ եւ եւրոպական քաղաքակրթութեան ու մարդկային իրաւունքների դատ» (Դրօշակ No. 1):

Անցնենք մեր կեանքի միւս գլխաւոր պայմաններին: Հայաստանը նուաճող մահմեդական սուլթանները ու զօրապետները չը հաստատեցին տիրած երկրում ժողովրդի համար փոքր 'ի շատէ ապահով դրութիւն, չ' ստեղծեցին այն ամէնատարրական պայմանները, որոնք անհրաժեշտ են ժողովրդի բազմանալու, զարգանալու համար: Նուաճած ազգերի ստրկութիւնը պահպանելու համար ամբողջ ուղղափառ տարրը ստացաւ մի զինուորական իշխող դասակարգի տիպար: Դարերի ընթացքում ուղղափառ տաճիկը արհամարանքով էր վերաբերում դէպի դեւավուր հայը, պատիւ ու պարծանք էր համարում ճնշել, կողոպտել, անպատուել դեւավուրին: Միաժամանակ մահմեդական պաշտօնեան ոչ միայն անտարբեր է եղել դէպի քրիստոնեաների շահը, այլ եւ անիրաւաբար միշտ մեղադրել, ղրպարտել, բանտարկել, ամէն կերպ ճնշել-վնասել է հային: Այդպիսով չը նայելով, որ հաւասարութիւնը յայտարարված էր կեանքի ամենադլխաւոր սկզբունքներից մէկը, տաճկի մոլեռանդութիւնը զրկեց հային եւ այս նահապետական առաւելութիւնից:

Իրաւունք չ'ունենալով զէնք եւս կրելու, որ հարկաւոր դէպքում կարողանար գոնէ ինքը իրեն պաշտպանել, հայը ակամայ պիտի ընկնէր այս կամ այն քրդի կամ բէգի հովանաւորութեան տակ, պիտի դնէր իր ապահովութիւնը այս կամ այն վարձատրութեամբ: Այդ կապը թէեւ ստիպողական չ'էր կառավարութեան կողմից, բայց լինելով անհրաժեշտ հետեւանք ժամանակակից պայմանների՝ օծվեցաւ զանազան սովորութիւններով եւ ստացաւ յայտնի գոյն՝ որը իր բացասական կողմերով նմանում է ինչպէս եւրոպական միջնադարեան սիստեմային՝ նոյնպէս եւ հայ նախարարականին, որը իրենք տաճիկները Հայաստանը նուաճելիս, հայ ժողովրդի աջակցութեամբ, ջնջեցին յանուն հաւասարութեան: Այդպիսով այն ճնշման վերայ, որը հետեւանք էր թափառական – խաշնարած կեանքի, աւելացաւ մի ուրիշը. ազգաբնակութեան մի մասի իշխումը միւսի վրայ: Այդ անիրաւութիւնն էլ ոչնչացնելու համար պէտք էր կառավարութիւն, որը սակայն չը կար:

Չը կար, ասում ենք, որովհետեւ Պօլսոյ ամիրաների հիմնած կազմակերպութիւնը ստեղծված էր միայն դրացի ազգերի հետ մրցելու, քրիստոնեաների ստրկութիւնը պահպանելու ու հարուստ դասակարգի շահերին ծառայելու համար: Հարկաւ այդ կառավարչական մեքենան չը թեթեւացրեց ժողովրդի որեւէ ցաւը, դարման չ'արեց նրա վէրքերին: Ոչ սուլթան Մէջիդի թանզիմաթը, ոչ էլ սահմանադրութիւնը չը շեղեցին ժողովրդի կեանքը ճնշման ճանապարհից: Աշխատող տարրը, ենթարկելով զանազան սահմանափակումների, մոցնելով նորա կեանքի մէջ աւելի «կարգ ու կանոն» եւ միաժամանակ կառավարութեան

ղեկը, շնորհիւ ցենզի, յանձնելով հարուստ դասակարգին՝ այս «կարգադրութիւնները» աւելի նպաստեցին նախկին չորբաճիների սերնդին հարստահարել աշխատող ամբոխը: Նախկին եւ նոր դրութեան մէջ զանազանութիւնը նրանում էր, որ հարստահարութիւնը ստացաւ աւելի կանոնաւոր ձեւ: Այսպէս, կառավարութեան եկամուտը ապահովեցնելու համար էֆէնդիները եւ պաշտօնեաները ստեղծել են մի այնպիսի սիստեմ, որով հարկերի ծանրութիւնը ընկնում է գիւղացու եւ աղքատ արհեստաւորի վրայ. Թող մէկը միւսից հարուստ լինի տասը, հազար անգամ. փոյթ չէ. դոքա պիտի վճարեն համարեա թէ հաւասար. վաշխառուական դրամագլուխը եւ այն բոլոր ձեռնարկութիւնները, որոնք իրենց տէրերին մեծ գումարներ են տալիս, վճարում են համեմատաբար չնչին բան: Հարկերի մեծ մասը, լինելով կողմնակի, կենսական մթերքների վրայ, ընկնում է հաւասար ծանրութեամբ աղքատ մշակի ու հարուստ բէգի վրայ: Յիշենք արդեօ՞ք զինուորական տուրքի մասին, որը վերջին ժամանակներս հասել է ամեն մի քրիստոնեայ տղամարդից՝ 38 դահեկանի: Ասենք արդե՞օք քրդերի, Պօլսոյ բնակիչների, մօլլաների, քահանաների մասին, որոնք թեթեւցրած լինելով հարկերից, այդպիսով իրենց բեռը ձգում են էլի աշխատաւոր դասակարգի վրայ:

Վերջապէս ժողովուրդը աւելի հաստատ կերպով հարստահարելու համար կառավարութիւնը ստեղծել է տեսակ տեսակ մօնօպօլիաներ (ծխախոտի, աղի, երկաթուղիների, հանքերի) որոնց նպատակն է մշակի գրպանից հանել իր աշխատանքի մի մասը եւ յանձնել եւրոպացի կամ տեղացի դրամատէրներին:

Ժամանակի ընթացքում կառավարութեան յիշեալ հարստահարութիւնների վերայ աւելացաւ եւ մի ուրիշը, ոչ այնքան նկատելի, սակայն նոյնքան զգալի. դա զանազան վաշխառուների, էֆէնդիների, բէգերի հարստահարութիւնն է: Չը նայելով, որ մահմեդականների տեսակէտից տոկոսը հալալ չէ համարվում, չը նայելով, որ հողը պատկանում է մշակողին, որ ամէն մարդ ազատ եւ հաւասար է միւսին՝ հարուստները՝ օգտվելով ամբոխի անտանելի դրութիւնից հազարաւոր գիւղացի զրկեցին մշակած հողից, շինած տներից, դարձրին նոյն իրենց հլու հպատակ: Հայաստանում կարելի է մատնացոյց անել ամբողջ գիւղեր՝ որոնք այս էֆէնդու կամ այն բէգի սեպհականութիւնն են դառել:

Հասկանալի է, որ այս անտանելի պայմանները այսօր ցոլացվում են ամենածանր հետեւանքներով: Ժողովրդի աղքատութիւնը օրէց օր սաստկանում է եւ նեղ դրութիւնից դուրս գալու համար, նա ստիպված է աւելի եւ աւելի մեծացնել գաղթականութիւնը իր հետ կապված թշուառ հետեւանքներով: Հոսանքը այնքան մեծ է, որ Հայաստանում կարելի է գտնել շատ աւաններ, որոնց բնակիչները կիսով չափ կամ-ամբողջովին գաղթած են հեռաւոր երկիրներ: Սկսվելով հայերից եւ յոյներից՝ պանդխտութիւնը վերջերս արմատ է ձգել եւ խաղաղ մահմեդական ազգաբնակութեան մէջ: Թշուառութիւնը հասել է այն աստիճանի, որ ժողովրդի աճումը նկատելի կերպով թուլացել է՝ եթէ դադարած չէ արդէն մի քանի գաւառներում: Այսպէս քանի գնայ՝ այս ընթացքը աւելի ուժ պիտի ստանայ, որովհետեւ՝ տուրքերը շատացնելով՝ կառավարութիւնը ոչ մի միջոցի չի դիմում երկրի արդիւնաբերութիւնը բարձրացնելու համար:

Հաղորդակցութեան ու հետեւապէս երկրագործական մթերքների արտահանութեան հարցը, որը ունի կենսական նշանակութիւն հողագործ հայ ժողովրդի համար՝ մնացել է բաց, չը նայելով ճանապարհատուրքի ծանրութեանը: Զանազան պատահական շարիքներից (աղար, երաշտ, կարկուտ եւ այլն) ժողովրդի ապահովութեան խնդիրը չը կայ կարծես տաճիկ կառավարութեան համար: Այն «երկրագործական սնդուկը», որը այդպիսի հանգամանքներում պիտի օգնութեան գար ժողովրդին, — զանազան ձեւականութիւնների պատճառով ծառայում է միայն վաշխառուների շահերին, իսկ ժողովուրդը նրա գոյութեան մասին գաղափար անգամ չ'ունի: Նոյնն է պարտադիր ուսման օրէնքը. դորա համար վերցրած տուրքը ծախսվում է գլխաւորապէս մի քանի միջնակարգ դըպրոցների վրայ ուր յաճախում են միայն հարուստ քաղաքացի մահմեդականների որդիքը: Չը պիտի մոռանանք եւ այն, որ այս վերջին երկու տուրքերի (ուսումնակ. եւ երկրագ. սնդկի) մեծ մասը ծախսվում է բոլորովին տարբեր հիմնարկութիւնների վրայ:

Վերջապէս հարկաւոր է յիշել եւ մի երեւոյթ կառավարութեան ներքին քաղաքականութեան մէջ, այն է՝ քրիստոնեայ ազգաբնակութիւնը նուազեցնելու եւ եթէ կարելի է նոյնիսկ ջնջելու պետական ձգտումը: Քրիստոնեաների աննշան թիւը համեմատաբար այլազգիների թուի հետ 'ի հարկէ կառավարութեան ձեռքում կը լինէր ամենաուժեղ մի միջոց վերանորոգումներ պահանջող ամեն տեսակ ձայների դէմ կռուելու համար:

Այդպիսով այս համառօտ ընդհանուր տեսութիւնից պարզվում է, որ տաճկահայ ժողովրդի դրութիւնը միանգամայն սարսափելի է շատ կողմերից:

Ազատել ժողովրդին այդ անտանելի դրութիւ-

նից, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թույլ տան նորան մտնել ընդհանուր մարդկութեան զարգացման շաւղի մէջ՝ կարելի է միայն յեղափոխութեամբ, կարելի է միայն միաժամանակեայ փոփոխութիւններով Հայաստանում տիրող բազմատեսակ պայմանների:

Հիմնելով մեր նպատակը եւ պահանջները այդ Մայր – Հայաստանում իշխող դրութեան վերայ, մենք չը պիտի անուշադիր լինենք նոյնպէս դէպի ուրիշ ազգերի օրինակները:

Ամբողջ կուլտուրական աշխարհի պատմութիւնը հազարաւոր տարիների ընթացքում ցոյց է տալիս մեզ՝ որ յանձնել ամբողջ ժողովրդի բաղդը մի դասակարգի՝ որը իր կացութիւնը կարող է հաստատել ծագման, ֆիզիքական եւ նիւթական ոյժի, կամ թէ չէ նոյն իսկ ուսման վերայ, տալ կառավարութեան ղեկը որեւէ դասակարգի, կը նշանակէ ստեղծել ճնշում այդ դասակարգի, դարձնել ժողովուրդը ծառայող այդ փոքրիկ լիտիկաններին:

մասի եւ միաժամանակ անբարոյականացնել իշխող պո-

Դորա հետ զուգընթացաբար հասարակական կեանքի ալիքը թուլացնելով առանձին անհատի զաղանական ձգտումները եւ պակասեցնելով նիւթական անհաւասարութեան հետ անխախտ կապված ճնշումը՝ տանում մեզ դէպի եղբայրական սկզբունքները, դէպի ընկերական, համայնական հաստատութիւնները:

Արդարութեան ամենագլխաւոր պահանջը թէ ամէն մարդ իր քրտինքովը պիտի աշխատէ կերած հացը. թէ հաւասար աշխատանքի հետ անհատը պիտի ունենայ նոյնպէս հաւասար իրաւունք կեանքից օգտվելու – սարածվում է աւելի եւ աւելի: Դէմօկրատեայի յաղթութիւնը այնպիսի հսկայ քայլերով է առաջ գընում, որ շատ ժամանակ չ՝անցած հասարակութեան ղեկավարող տարրը զանազան առանձնաշնորհումների տեղ լինելու է աշխատանքը իբրեւ ընդհանուրի բարօրութեան միակ միջոց:

Ա) Ահա այս է պատճառը, որ հայ յեղափոխականները, միշտ դէմ լինելով որեւէ առանձնաշնորհումների՝ կը զարգացնեն ու կ՝ընդարձակեն դարերի ընթացքում հայութեան մէջ տեղի ունեցած ու խորը արմատ ձգած ընտրողական սկզբունքը: Ապագայ ազատ Հայաստանում իշխող ռամկավարական սահմանադրութիւնը՝ ծառայելով ընդհանրութեան շահերին, պիտի եւ հաստատված լինի ամէն հասակաւոր բնակչի հաւասար ընտրողական իրաւունքի վերայ առանց ոեւէ ցէնզի. իսկ այդ շահերը իրականապէս պաշտպանելու համար, ընտրողական սկզբունքը կառավարչական բոլանդակ գործողութիւններից սկսած դէպի առաւել նեղ զաւառականը ու համայնականը պիտի ստանայ առաւելագոյն լայն ծաւալ:

Այսպիսի սահմանադրութեան վերայ հիմնված կառավարութիւնը անշուշտ կը հաստատէ.

1. Անձի եւ կայքի ապահովութիւն ամենախիստ միջոցներով.
2. Տարբեր աղդութիւններին ու զաւանութիւնների հաւասարութիւնը օրէնքի առաջ.
3. Ազատութիւն խօսքի, մամուլի եւ այլ՝ ռամկավարական երկրներում ընդունված արտօնութիւնների:

Բ) Նոյնքան մեծ, եթէ ոչ աւելի, նշանակութիւն ունի հայութեան վերածնման համար դիւղացու ազատութիւնը ներկայ ազքատ դրութիւնից: Որպէս զի ժողովուրդը ոչ միայն խօսքով, այլ եւ իրականապէս օգտվի իր ձեռք բերած ազատութիւնից, որպէսզի նա մինչեւ անգամ կարողանայ պահպանել իր ազատութիւնը եւ ոչ թէ չուտով կրկին ղրկվի ղրանից, հէնց առաջին քայլերում ժողովրդի ներկայ թշուառ դրութեանը օգնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում.

1. Տալ չ՝ունեցողին հող եւ համաձայն դարերից ի վեր գոյութիւն ունեցող նոյն իսկ տաճկաց սովորական ու դրական օրէնքի իմաստին որոշ կերպով ապահովել մշակողին հողից օգտուելու կարելիութիւնը:
2. Ամէն տեսակ տուրքերի ենթարկվող բոլոր իրերի գնահատումը պիտի կատարվի առանց ցենզի ընտրուած չինական եւ թաղական ժողովներում, որոնք պէտք է առաջնորդուին հայութեան մէջ խորը արմատ ձգած և եւրոպական յառաջդիմող հարկահանութիւնից չի տարբերվող «կարողութեան» «համբայական» սկզբունքով:
3. Ոչնչացնել զինուորական տուրքը, հաստատելով տեղի եւ ժամանակի պահանջներին համաձայն զինուորագրութիւն:

Գ) Հայաստանը յառաջադիմութեան ճանապարհի վրայ դնելու համար անհրաժեշտ են նաեւ,

1. Ամեն կերպ նպաստել ժողովրդի զարգացմանը ու ուսմանը:
2. Զարգացնել ժողովրդի արդիւնաբերութիւնը մտցնել վերջինիս մէջ նոր ձեւերը, լայնացնել արտահանման միջոցները եւ այլն.
3. Ոյժ տալ դիւղացու համայնական սկզբունքներին, զարգացնելով այն ընկերական հիմնարկութիւնները ու ձեւերը, որոնք ծագել են Հայաստանի հողի վերայ, տեղական ու պատմական հանգամանքների ազդեցութեան տակ,

լայնացնել այդ հիմնարկութիւնների սահմանը դիւղից, թաղից սկսած մինչեւ դաւառը, մինչեւ ամբողջ տէրութիւնը եւ այսպիսով միանդամայն ապահովել համայնքի ամէն մի անդամին բնութեան եւ ընթացիկ կեանքի պատահական հարուածներից:

ԼՈՒՐԵՐ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Մուշից. Անցեալ ամառ Մուշի եւ Բաղէշի դաւառից մէջ անասնոց հիւանդութիւն լինելու պատճառով, պանդխտութիւնը արտաքոյ կարգի ծաւալեցաւ ամէն ուրէք: — Կառավարութիւնը ձերբակալած է Արաբոյին, որ մի քանի տարի է ձեռք անցած չէր՝ հակառակ 'ի գործ դրուած միջոցներու: Նա կը մեղադրվի աւազակային խումբ կազմած լինելուն մէջ. քննութիւնը կը շարունակվի:

Բաբերդից. Կիւ եւ Աղրճի գիւղերէն տաճիկները 100 ոչխար են գողցեր: Բալախօս գիւղէն մի քանի դոմէշներու կաշիները գիշերուայ ատեն գերբեր եւ տարեր են տաճիկները:

Կարինից. Եօթ ալաշկերտցի հայեր, որոնց ձերբակալել եւ բերել էին Կարին, մի ամբողջ տարի տանջելէն ետքը՝ դատապարտեցին 5–15 տարի բերդարգելութեան եւ բանտարկութեան:

Տրապիզոնից. Քաղաքում երկու պաշտօնական լրտեսներ կան այժմ. մէկը՝ հայ միւսը՝ հայախօս տաճիկ: Նոքա արձակ համարձակ մտնում են ամեն տեղ եւ յարաբերութեան մէջ են կուսակալի եւ ոստիկանապետի հետ:

Վանից. Վերջերս հրահանգ եկած է Սուլթանից որ ամէն ջանք գործ դրուի խաղաղութիւն պահպանելու եւ ոչ մի կերպ չ՝ յուզել հայերին: Արդէն կառավարութեան սաստիկ փափագն է՝ խաղաղութիւնը վերականգնել, քաջ գիտնալով որ խաղաղութիւնը հայի համար մեռելութիւն ըսել է. թուրքը սկսած է օրօր կանչել որ հայն նորէն իր վեց հարիւր տարուայ սեւ քունը մըտնայ, ուսկից քիչ մը աչքերը կը բանայ... — Թափառական քիւրտերը օր ցերեկով օսմանեան զօրանոցէն մարթինի հրացան կ՝ստանան եւ շուկայէն գոռոզութեամբ անցնելով՝ առանց քաշուելու կ՝ըսեն. «այս բոլորը ֆլլահներու (հայերու) համար է:» — Շատախի Նառ գիւղի վրայ 30–ի չափ զինուած քրդեր կը յարձակին և կը գարնեն ոչխարներ: Գիւղացիք կ՝սկսեն պաշտպանել եւ ոչխարի տէրերից մինը՝ Շառօն, որ կատաղի կը կռուէր, գնդակահար կ՝ինայ: Քրդեր կը քշեն 200 չափ ոչխարներ: Հայերն կը ճանչնան իրենց ֆշտական ասպատակող Մոկացի քիւրդ՝ Աբդալ եւ Սուլէյման բէգերուն: Հայեր միւս օր ճանապարհ կ՝ինան Վան բողոքելու. բայց վալին կը կարդադրէ, որ հայերը երթան եւ իրենց ոչխարները յետ առնեն...

Ալաշկերտից. Քրդերն եւ թուրքերը կառավարութենէն ստացած արտօնութիւններէն սիրտ առնելով անասելի անպթութիւններ կ՝ընեն: Քրտական անկանոն զօրքեր դիւղէ 'ի դիւղ շրջելով բարբարոսութիւններ 'ի գործ կը դնեն, կը յափշտակեն տներուն մէջ եղած չեղածը. զարնելով ու անարգելով կը հեռանան: — Բռնի կրօնափոխութիւններ օրէ օր կը շատնան: Երանոս գիւղէն 15 տարեկան տղայ մը Կարա–Քիլիսէի մէջ Կարնոյ վալիին ներկայութեամբ տաճկըցուցին: Պիթլիսի Տիրանց գիւղացի մէկ տղայ Արաբ աղայ քիւրտը տաճկցնելով իր քովը կը պահէ: Մի աղջիկ Կարա–Քիլիսէի մէջ դայմազամի դրդմամբ բռնի տաճկըցուցին: — Մէկ պիթլիսցի տարի մը թրքութեան ծառայելէ ետքը իր ընտանիքը եւս կրօնափոխ կ՝ընէ: — Մի հայ ընտանիք Մանազկերտէն Ալաշկերտ դառնալու ժամանակ գիւղին մէջ քրտերէ բռնվելով կը թրքացվի. — Օ. գիւղից 60 ոչխար տարած են: — Աշղալէ գիւղացի մի երիտասարդ արտէն դառնալուն մի քիւրտ հրացանով կ՝սպաննէ զայն: — Քրտական անկանոն զօրքը, 200 անձէ բաղկացեալ, երեկոյեան դէմ կը մտնի Օ. գիւղը եւ կանգնելով ոչ Պօղոսի դուռը՝ կը պահանջէ՝ որ բոլորն ալ հիւրնկալեն. իսկ գիւղացիք խիստ ընդդիմադրութիւն մը կ՝ընեն յորմէ ընդհարում մը կը ծագի եւ գիւղացիք զարնելով կը քշեն անկանոն զօրքը: — Քուիզռանայ Այիպ փաշայի որդին Բէյսուլ պէյն ամէն գիշեր Մանկասար գիւղին վրայ յարձակումներ կ՝ընէ իր գազանային կիրքը յագեցնելու, սակայն 'ի զուր: Բռնութիւնք վերջապէս եփեցին եւ շատ մարդիկ պատրաստեցին մեր մէջ. շատ անտարբեր մարդիկ փոխուեցան, եկան ուղիղ ճանապարհի վրայ. անառակ որդիքը այսօր հարազատ դառնալով, կը սրբեն իրենց տարաբաղդ մօր դառն արտասուքը... — Անցեալները 30 բարդ արմտիք Եէհնիթէփէ եւ Բլուր գիւղերուն մէջ այրեցին. 15 բարդ Զլքանի. 40 բարդ ցորեան Երանոս գիւղի կալին մէջ. եւ Կրպօ անուն մի գիւղացու ձեռքերը կապած ձգեցին կրակի մէջ: Նոյն գիւղացի Ցարութիւնին 10 սայլ կտաւատը այրեցին. ո՞ր մէկը ըսեմ: Այսպէս մինչդեռ հայ գիւղացին կը փութայ ճարել իր ամեռուայ պաշարը, անգութ ձեռքը ցորենի հասկերուն իսկ չի խնայէր: Լուսնկայ գիշերին երկնի եւ աստղերու տակ վառուած հազարաւոր ցորենի բարդեր իրենց բոցավառ կրակին հետ հայ ժողովրդի խեղճուկ ձայնովը արձագանգ կուտան յաւիտենական աթոռին. «խեղճ ժողովուրդ, քո հացն ալ

կտրեց անգութը։ արդեօք Արարիչը միշտ անմխիթա՞ր պիտի թողնէ զքեզ...»

ՆԱՄԱԿ ԱԼԱՇԿԵՐՏԻՑ

Հրոսակային խմբի կռիւը.

Անցեալ տարուայ գարնան սկիզբներին աւազակապետ Ցարութիւն աղան իր խմբով գտնվում էր Ալաշկերտի շրջանակներում։ Խմբին հասնում էին այդ միջոցին ամէն կողմից սրտաճմլիկ լուրեր։ Բլուր գիւղում երկու հայ են սպանվել, Մանկասար գիւղի վրայ յարձակվել եւ քահանայի միրուքը փետել էին, գիւղացիներին բռնի բանեցնում էին զօրանոցի շինութեան վրայ բազմաթիւ ընտանիքներ թալանվում էին եւ հազար ու մէկ անզթութիւնների ենթարկվում. նոյն իսկ խմբապետի տան վրայ յարձակուել եւ կնոջ թեւը կոտրել էին։ Վրէժխնդրութեան ոգով լցուած խումբը այդ բոլորի դէմ արիւնով բողոքելու համար սպասում էր յարմար առիթի, որը անակնկալ կերպով աւելի շուտ ներկայացաւ։ Քրդերը, լսելով նրանց մասին՝ մեծ բազմութեամբ յարձակումն են գործում խմբի վրայ։ Այդ լինում է սեպտեմբերի 14ին առաւօտեան պահուն։

Քրդերի բազմութիւնը ու նրանց կրած զէնքերի առաւելութիւնը չ՝են սարսեցնում խմբապետին։ Նա կանոնաւորելով իր մարդկանց, պատրաստվում է դիմադրութեան։ Շատ չ՝անցած՝ սկսվում է սոսկալի ընդհարումը, որը միանգամայն արժանի է հերոսական կռուի փայլուն անուանը։

«Ց՝մ՛ահ, ց՝մ՛ահ»... աղաղակում է խմբապետը եւ տալիս կռուի նշանը։ Խումբը ձայնակցում է նրան եւ օրինակելի անվեհերութեամբ դիմաւորում թշնամուն։

Կռիւը տեւում է երկար, մինչ երեկոյ։ Թշնամու «հաւարին» հասնում են քրդերի ահագին խմբեր, 400–500 ձիաւոր եւ հետեւակ։ Քիւրդ կանայք անգամ դուրս են գալիս տղամարդկանց փամփուշտներ հասցնելու եւ վիրաւորեալներին օգնելու համար։ Քրդերը, աստիճանաբար ստուարանալով, պաշարում են հայերին եւ կռիւը կենտրոնանում է մի տափարակ դաշտի վերայ։

Ցարութիւն աղան, կամենալով փոխել խմբի դիրքը, առաջ է շարժվում, ճեղքում է քրդերի շղթան, եւ իր մարդկանցով մի կողմն է անցնում։

Սակայն այդ հերոսական թռիչքը անդոհ չ՝է անցնում... խմբապետը, կրծքին ծանր վէրք ստանալով, «ինձ մի նայէք, սիրելիք, մինչեւ մահ կռուեցէք», ղոչում եւ ընկնում է գետին...

«Մինչեւ մահ» խօսքերը մի անգամ եւս դրօշմվելով խմբի սրտում, նորոգում է անզուսպ, անձնուրաց կռիւը, եւ միայն գիշերային խաւարն է՝ որ կարողանում է վերջ դնել ընդհարումին եւ ցրուել մարտնչողներին։

Ինչպէս պատմում են, քրդերը մէկին բռնում են ողջ եւ վրանը տանելով, հարց ու փորձից յետոյ դլխատում են։

Կռուի լուրը օրուայ ընթացքում տարածվում է ամբողջ շրջակայքը եւ հայերը պատրաստվում են եղել օգնութեան գալու։ Այսպէս Մանկասար եւ Եօնջալու գիւղերից գիշերը հասնում են 50 զինուած երիտասարդներ, սակայն այդ միջոցին կռուի դաշտը արդէն դատարկ, ամէն բան վերջացած է լինում, այն դաշտը, որ մի քիչ առաջ հայ քաջերի արեամբը ներկվել էր։ Նորեկները վշտացան, բայց իրենց հետ տարան վրէժխնդրութեան եւ պարտաճանաչութեան անկորնչելի տպաւորութիւն։

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ

Սեպտեմբերի 24–ին Կարինից 4–5 ժամ հեռաւորութեան վերայ, աւազակների մի խումբ Շամիլ անուն մէկի առաջնորդութեամբ կտրում են Թորթում գաւառում Լիսկաւ եւ Նիխաղ (վերջինիս մէջ դայմագամ է նստում) գիւղերի ճանապարհը, կողոպտում են 25–ի չափ տաճիկ ճանապարհորդներ ու սայլորդներ եւ աւարի են տալիս սայլերի վրայ բարձած մանիֆակտուրայի, շաքարի, թէյի, բրինձի եւ այլ ընդեղէնների պաշարը, որոնք տանելիս են եղել սահմանագլխի զօրաց համար։ Ձ՝նայելով, որ աւազակները սայլորդներից իմանում են, որ կէս ժամ հեռաւորութեան վերայ գտնուող Ա. գիւղում գիշերել են սայլերի հետ սահմանագլուխ գնացող 100 կանոնաւոր զինուոր. այնուամենայնիւ նոքա հանդարտութեամբ հաւաքելով իրանց աւարը եւ կալանաւորներից մէկ տաճկի սպանելով (այն անձն է, որ իւր եղբօր եւ այլոց հետ մասնակցել էր անցեալ տարի անտառում երեք հայ երիտասարդաց կացիններով սպանման սարսափելի գործին) հանգիստ կերպով բարձրանում են լեռը եւ դիրք բռնում։ Մինչ այս մինչ այն հնձւոր երկու տաճիկ, հեռուից տեսնելով այս բոլորը, փախչում են Ա. գիւղը եւ այն տեղից Նիխաղ դայմագամին իմաց տալիս։ Կէս ժամ չ՝անցած գալիս հասնում են 30–40 ձիաւոր զրոսարդարներ (լեռների, դաշտերի եւ ճանապարհաց հսկող զինուոր) իրենց գլխաւոր յայտնի Մէմմէդ բէգի առաջնորդութեամբ. ապա գալիս են նաեւ Ա. գիւղում գտնուած 100 զինուորներն եւ գիւղացիների ահագին խմբեր։ Կառավարութեան զինուորները պաշարման դիրք բռնած առաջ են խաղում, բայց հանդիպում են աւազակների կատաղի ընդդիմադրութեան. այնպէս որ վերջիններս զինուած արագաձիգ հրացաններով գնդակի կարկուտ էին տեղացնում թշնամու գլխին։

Այսպէս 15 հոգուց բաղկացած մի խումբ 6 ժամ շարունակ 200 հոգու չափ բաղմութեան դիմադրելուց յետոյ յաջողում է ցրուել դրանց, վիրաւորելով մի քանին. իսկ իրանք մնում են բոլորովին անվնաս մի անգամ եւս ապացուցանելով, որ «Աստուած օգնում է համարձակներին:»

Այս անցքից 3 օր վերջ, երբ աւազակները անհետացած էին համարվում, Նարմանի Իղ գիւղի եայլայի մէջ սպանված եւ թողնված 3 դիակ են գտնում. երկուսը ամսի 24-ին սպանված տաճկի հօր եւ եղբօր դիակներն էին, իսկ երրորդը մի տաճիկ աղայի: Առաջինների մասին ասուեց, որ մասնակցած էին 3 հայ երիտասարդի սպանման գործին, իսկ վերջինը յայտնի է եղել իբրեւ մի դարշելի կեղեքիչ, որը մօտակայ հայ գիւղերի հողերը ապօրինաբար իրեն էր սեպհականացրել:

Երբ այս եղելութիւնների ազդեցութեան տակ գիւղացիք եւ կարաւանները դադրեցրել էին իրանց երթեւեկութիւնը, նոյն Շամիլի խումբը կտրում է Սիվրիի կրճից դէպի Նիխաղ եւ այն տեղից Կարին տանող թաղաւորական մեծ ճանապարհը: Երկու օր էլ այդ տեղ կողոպտելով անցուդարձ անողներին, խումբը տանում է 2 ձի, թողնելով 20-ի չափ կապուածներ, որոնց մէջ եւ 3 կին: Կանանց հետ աւազակները սակայն վարուելիս են եղել ազնուաբար եւ յարգանքով:

Նոյն օրը կէսօրից յետոյ մի ճանապարհի վրայ աւազակներին հանդիպում են Թորթումի կարաւաններից մի քանիսը. դոցանից աւազակները վերցնում են ուտելեաց ամբողջ պաշարեղէնը, փոքր ինչ դրամ եւ 10 հատ ընտիր ձիանք: Ձիատէրերից երկուսը փախչելով «հաւարի» են գնում մօտակայ գիւղերը: Փոքր ժամանակից յետոյ ամէն կողմերից հասնում են խումբ խումբ զինուած գիւղացիներ: Առաջ է գալիս 3 ժամ տեւող մի ընդհարում: Խումբը, առնելով ձիաները, անյայտանում է, թողնելով կապված ամբողջ կարաւանը:

Հետաքրքիր է, որ Նիխաղի գայմաղամը առաջին անյաջողութիւնից յետոյ՝ փոխանակ նոր միջոցներ ձեռք առնելու, մի կողմից սպասելիս է եղել՝ որ յանդուգն խումբը աւարով յագենայ եւ հեռանայ, իսկ միւս կողմից, վախենալով թէ մի դուցէ խումբը յարձակի իր նստած 100 զինուորով Նիխաղ գիւղին վրայ. սորա համար Կարինից եւ այլ տեղերից եկած զինուորներին պահում է իր մօտ, Նիխաղը պահպանելու համար: Համարեա միեւնոյն պրակտիկային են հետեւում եւ դրոարդարների եւ զապտիաների խմբերը, որոնք 20-30 հոգւով այս ու այն կողմն են շրջում: Հէնց որ լսվում է՝ թէ մի տեղ աւազակներ են յայտնվել, նոքա դուրս են գալիս, անցնում մի քանի ժամ ապահով ճանապարհ, եւ ապա ընկնում են գիւղերը, ասէին բան ազատագրաւորի գիւղացիներից ստանալու եւ աղայական կեանք անցկացնելու համար: Յետոյ՝ երբ լսում են, որ աւազակները հեռացել են եւ ճանապարհները բաց են, նոքա մի պտոյտ են գործում գիւղերը եւ վերադառնում գայմագամի կամ կուսակալի մօտ իրենց առասպելական աննման քաջութիւնների մասին զեկուցումներ ներկայացնելու եւ իշխանութեան շնորհակալութեանը արժանանալու համար: Հասկանալի է հետեւաբար՝ թէ ի՞նչպէս Շամիլի խումբը հէնց կառավարութեան քթի տակ, կէս ժամ հեռաւորութեան վերայ կարող էր մարդիկ սպանել, քարաւաններ կողոպտել, ամբողջ օրերով ճանապարհներ կտրել, վնասել ամենայն անց ու դարձի եւ սարսափ ձգել ժողովրդի վերայ՝ քաջութեամբ ցրուելով՝ թէեւ անհամեմատ աւելի շատ, բայց հոգով փչացած, անբարոյականացած հակառակորդներին:

Վերը բերված դէպքերի մասին ժողովրդի մէջ սկսվել է տարածվել զանազան տարօրինակ լուրեր. եթէ լսէք ամբոխին՝ աւազակները բռնվածներից շատերին յայտնած են որ, «մենք ձեզ վնասելու միտք չ՝ունինք. այլ մեր ցանկացած որսը հարստահարիչ կառավարութեան բարբարոս պաշտօնեաներն են եւայլն:» Զ՝մոռնամ ասել՝ որ այդ տարօրինակ աւազակախումբը դեռ դեղերում է այս ու այն կողմը. յամենայն դէպս՝ այդ աւազակային խմբից հայերը վնաս չ՝են կրում երբէք:

ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ

Թրքական ճնշումը քանի գնում ծանրանում, անտանելի է դառնում Տաճկա-Հայաստանում:

Ծանր հարկերը ու բարբարոս բռնութիւնները արդէն վաղուց քամել, ուժասպառ են արել հայ ժողովուրդը: Առօրեայ կեանքում կանոնաւոր միմեանց յաջորդող սոսկալի դէպքերը օր աւուր շտապեցնում, մղում են ժողովրդին դէպի ապստամբութիւնը, որի նշոյլները վաղուց են նկատվում: Պիտի դարմանաք գուցէ եւ չը հաւատաք, եթէ ասեմ, որ բորբոքված անճարացած հայ ժողովուրդը քարով, փայտով, դերանդիով պէտք է դիմէ ապստամբութեան մեծ օրին, եթէ չ՝ունենայ ձեռքին աղատարար հրացանը, փրկիչ ատրճանակը: Տենդային տագնապով տոգորված յուսահատ առաջ է վազում այսօր այդ խեղճագոյն ամէն կողմից իրաւունքների արժանի ժողովուրդը եւ դուցէ շատ մօտիկ ապագայում խաղաղ կեանք վայելողներս տեսնենք թէ՝ ինչպէս նա յանկարծ բռնկում եւ պայթում է...

Ահա մի քանի դէպքեր, որոնք լուսաբանում են մեր առօրեայ ծանր դրութիւնը:

Վանի գիւղերից մէկում մի քաջ հայ գիւղացի կար. Ոչ մի զիւրդ կամ թիւրք երբէք չ՝է կարողացել

կողոպտել կամ վիրաւորել նրա պատիւը: Կառավարութեան, քրդերի եւ թիւրքերի համար միանգամայն անտանելի է տեսնել մի անվախ, քաջ եւ ինքնուրոյն հայ: Մի քուրդ, որը կառավարութիւնից խրախուսված վաղուց նրա ետեւից էր ընկել, մէկ գիշեր վառում է նրա դէզը: Վերջինս իր սովորութեան համեմատ շտապում է հետեւիլ թշնամուն, որը զինուած յարձակվում է հակառակորդի վրայ. գիւղացին ճարպիկութեամբ պաշտպանվում եւ ծանր վէրք է հասցնում քրդին: Միւս օրը այդ հային կապած տանում են Վան եւ բանտարկում: Անցնում է ուղիղ 5 օր: Ոստիկանութիւնը հինգերորդ օրը մի կապուտկած, մի նահատակված դիակ է յանձնում հայերին, որ քրիստոնէական ծիսով թաղեն: Վանի հայերը սաստիկ վրդովվում եւ բժիշկ են պահանջում դիակը քննելու: Կառավարութեան հրաւիրած զինուորական բժիշկը յայտնում է, որ մահը սովորական է, այն ինչ քարերն անդամ աղաղակում էին, որ հանդուցեալը զոհ է եղել չարաչար տանջանքների: Ստոյգ յայտնի է նոյնպէս, որ անխիղճ ինկվիզիտորի դերը յաջողութեամբ կատարել է բանտապետ զարդեանը: Պաղատում եմ ձեզ, կարելի՞ է համբերութեամբ տանել այս սոսկալի կեանքը:

Կառավարութեան թելադրութեամբ սպանվում են մէկը միւսի ետեւից հայ գիւղերի այն ոէսներ եւ իշխանները, որոնք որեւէ կերպով պաշտպան են հանդիսանում ժողովրդի շահերին: Այսպէս Շատախի քաջ եւ յայտնի Մուխսի Սաքօն (մահտեսի Սահակ) սպանվեց աւազակ Շաքիրից եւ նրա եղբօրից, որոնք թէեւ բանտումն են այժմ, բայց անկասկած շուտով կ'արձակվին: Կաճկանի ոէսը օր ցերեկով շատերի ներկայութեամբ սպանվում է հրապարակի վրայ: Այս առթիւ 30-ի չափ գիւղացիք Վան էին եկել Խալիլ փաշայից արդարադատութիւն խնդրելու: Բայց փշից ե՞րբ է խաղող քաղվել... Այնուհետ վերջերումս առաջ եկած ծանր հողային հարցը պատճառ եղաւ Մելիք Աբրահամի մահուան: Մելիք Աբրահամը մի բարձրահասակ եւ գեղեցիկ մարդ էր ու այդ արտաքին գեղեցկութեանը ներդաշնակում էին նրա ներքին ազնիւ յատկութիւնները: Հայի տունը թալանէին, ապրանքը յափշտակէին թէ աղջիկներ անպատուէին, միշտ Մելիքը պաշտպան կը հանդիսանար: Հէնց այդ պատճառով էլ նա մի կողմից շատ թշնամիներ էր վաստակել եւ մի քանի անգամ մից շատ թշնամիներ էր վաստակել եւ մի քանի անգամ բանտարկվել էր:

Մոկաց քիւրդ բէգերը ուզում էին խլել Մոկսի հայոց վանքերի դարեւոր սեպհականութիւնը — հողերը: Աղթամարայ թրքամոլ, հարստահարող եւ մատնիչ Խաչատուր կաթողիկոսը, 'ի հարկէ, չ'էր միջամտում Մոկսի իրաւունքները պաշտպանելու. եւ ահա դարձեալ հանդէս է գալիս Աբրահամը եւ քրդերը վրէժխնդիր են լինում, ճանապարհին դաղտագողի դընդակահարելով նրան: Եղած բողոքները մնացին անհետեւանք: Կարելի՞ է արդեօք չը վառվել արիւնալի վրէժխնդրութեամբ այսպիսի դէպքերի առաջ: Եւ ահա այդ արդար զգացմունքը աճում, զարգանում է հայերի մէջ, արտայայտվում երբեմն սոսկալի կերպով: Ցայտնի է առհասարակ՝ թէ ի՛նչ է Տաճկաստանում կառավարական պաշտօնեան. ամենավերջին զաբթիան իսկ մի անիրաւ բռնակալ է, որի կամայականութիւնը պատժվելու վախ չունի: Դրանցից մէկը մանաւանդ մեր կողմերում աչքի էր ընկնում իր անսահման լրբութեամբ. եւ ահա մի քանի երիտասարդներ անցեալներումը, յարմար տեղում պատահելով նրան, արդար վրէժխնդրութեամբ լեցված տեղն ու տեղը սպանում են: Եւ այդպիսի արիւնահեղ բողոքների օրինակները արդէն ամէնուրեք բազմանալու եւ տարածվելու վրայ են:

Այ՛ո, մեր դրութիւնը նախկինը չ'է. երիտասարդութեան եւ ժողովրդի տրամադրութիւնը ծայրահեղ սպառնալից է...

ՆԱՄԱԿ ԽՆՈՒՍԻՑ

Կուզեմ խօսել Խնուսի ներկայ վիճակի մասին, բայց կը շուարիմ, չ'գիտեմ ո՞ր մէկը թուեմ այն ոճիրներէն, որ կը կատարվին մեր չորս կողմը, գաւառիս կառավարիչներուն քթին տակ:

Խնուսի արեւելեան ծայրը գտնվող Կօպալ գիւղին մէջ Հասանանցի քիւրդ մը օրը-ցերեկով մտնելով գիւղացիի տուն մը, տան պառաւը հակառակելուն քիւրդը հրացանի կոթով վայր կը գլորէ անոր. մինչ երիտասարդ տղան կուզէ օգնութեան հասնել, քիւրդը դընդակահար կընէ, փչրելով անոր գանդը: Սպանեալ դիակը գայմագամին բերվեցաւ, բայց ո՞մ ինչ, հայ մը հաւ մը: Քիւրտերը Եփլիս գիւղէն մի հայ մեռցնելով եղները կը տանին: Արօս գիւղի մէջ ճշտութեամբ նոյնը կը կատարվի. Կառավարութենէն խրախուսեալ քրդեր ամէն օր այսպիսի անդթութիւններ կընեն անիմանալի չարչարանաց զոհ տալով հայերը: Քրդաց ամենօրեայ խօսքն էր թէ՝ «ձեր կեանքը կարճ է, առաջիկայ տարին ձեր վերջին օրերն են եւ այլն:» Արդարեւ այս տարի շատ անդթութիւններ կատարվեցան. սպանվեցան մարդիկ, յայտնապէս վառեցին հազարաւոր բարդեր, որաններ, խոտերու դէզեր, ամերուն բռնի առեւանդեցին քանի՛ քանի՛ հայ կանայք, հարսք եւ օրիորդք... դրանցից ոմանք անդարձ մնացին, այլ իրենց հաւատն ու պատիւը պաշտպանելով արիւնաթաթախ և ուշաթափ մնացին լեռներու ու ձորերու մէջ մինչեւ ազգականաց գիրենք գտնելը: Այսպիսի զանազան պատճառներով յա-

պաղեց գիւղերու երեսը ծախելը (տասնորդական տուրքը) եւ հասոյց ձմրան մօտ։ — Գիւղացոց մեծ մասը կորսնցուցին իրենց բերքերը անձրեւի հեղեղներէն եւ այսօր ուտեստի կողմից մեծ տառապանաց մէջ են։

Մինչդեռ գիւղացիք խեղճ ու կրակ, թաց աչքով կը նայէին իրենց ջրաողող կալերուն՝ յանկարծ բարձրացաւ մի փոթորիկ։ Քրդաց զօրքերը կազմակերպող 4-րդ զօրաբաժնի հրամանատարը շրջակայ դաւառներէն եկաւ 'ի Խնուս։ Տեսնելու էր այն տեսարան, որ նոր էր մեղի համար։ Զանազան քիւրդ ցեղեր մարախի ու Բէլի անճոռնի խուժանի նման լեցվեցան 'ի Խնուս։ Մի նոր Խորենացի պէտք էր Բիւրակն եւ Խամուր լեռներուն վերայ, որ ըստ արժանոյն ողբար հայոց աշխարհը...

ՆԱՄԱԿ ՏՐԱՊԻԶՈՆԻՑ

Մեր դրութիւնը նկարագրելոյ համար՝ սկսենք քիչ հեռուից։ Կարնոյ եւ Պօլսոյ դէպքերից յետոյ, երբ հայկական խնդիրը դառաւ առօրեայ հարց՝ կառավարութեան խստութիւնները սաստկացան եւ մեղ վրայ։ Քաղաքական հարցերի առթիւ հալածանքներ ու աքսորները ստացան մշտական, քրօնիքական բնաւորութիւն։ Փակվեցին տեղական կլուբները. վաճառական Շ. բանտարկվեց խորքերը զէնք փոխադրելու պատճառաւ. լրտես Մամբրէ վարդապետի ցուցմունքով ձերբակալվեցաւ Աւստրիոյ հիւպատոսարանի թարգման եւ քաղաքումս յարգված Պետրոս Մարիմեանը իր եղբօր հետ. վերջինս սակայն շուտով ազատվեց, իսկ Պետրոսը աքսորվեց Աքիա։ Սրտաճմլիկ էր այն տեսարանը, երբ քաղաքից Պօլիս ուղարկելիս՝ ժողովրդի ահագին բազմութիւն թափվել էր նաւահանգիստը յատկապէս իր «մնաս բարեաւը» ասելու աղնիւ յեղափոխականին. կարծես ժողովուրդը հանդիսաւոր կերպով երդվում էր անդադար կռուել այն գործի համար, որին զոհ էր դնում՝ իր սիրելի որդիներից մէկը... Այնուհետ՝ շատ չ'էր անցել, երբ տեղի ունեցան Ազգային դպրոցի մի ուսուցչի, առաջնորդարանի քարտուղարի, մի տիկնոջ եւ վերջը՝ նոյն դպրոցի տեսչի բանտարկութիւնները։ Սորանից յետոյ հասկանալի է թէ՝ ինչ ուրախութեամբ էր նայում ժողովուրդը այն հրդեհի վրայ, որը լափեց ոստիկանատան եւ փոստայի մեծ չէնքերը. հասկանալի է նոյնպէս թէ՝ ինչպէս էր նա բացատրում այն ժամանակ կատարված փորձերը՝ թունաւորել ընդհանուր դատախազին եւ ուրիշներին։ Ցիշեալ բանտարկեալներին դատում էր նահանդական դատարանը. նիստի օրը սրահը լիքն էր հասարակութեամբ եւ տեղական պաշտօնեաներով։ Ամբաստանեալները՝ օրէնքի 58-րդ յօդուածով, մեղադրվում էին նրանում, որ կազմել են գաղտնի ընկերութիւն տէրութիւնից մի մասը անջատելու եւ անկախ կառավարութիւն հաստատելու համար։ Մեղադրեալները պնդում էին, որ դատախազի ասածները հիմնուած լինելով ուրիշի գրած մի նամակի եւ լրտեսի տուած տեղեկութիւնների վրայ՝ զուրկ են որեւէ օրինական արժանաւորութիւնից։ Զորս ժամ խորհրդակցելուց յետոյ՝ յայտարարվեց. արդարացնել Տիկին Պայծառին, քարտուղար Ճանիկ Վարդանեանին եւ Յովսէփ Արզուութեանին. իսկ քաղաքիցս անյայտացած ուսուցիչ Խուչպուլեանին եւ Տեսուչ Բարսեղ Զաւարեանին ենթարկել բերդարգելութեան, առաջինին 7 եւ վերջինին 4 տարով։ Ուշադրութեան արժանի է, որ Զաւարեանի մեղադրական կէտերից մէկն էլ նրա բարձրագոյն ուսումն էր, — այդպիսիք աւելի վտանգաւոր են։ Արզուութեանը եւ Զաւարեանը Պօլսում բանտարկված Ցակ. Վարդապետիկեանի հետ իբրեւ ռուսահպատակներ՝ յանձնվեցին իրենց կառավարութեանը, որը աքսորել է Կովկասից Ռուսաստան, առաջինին՝ 6 ամսով, երկրորդին՝ 1 տարով եւ երրորդին՝ 3 տարով։

Խստութիւններ եւ հսկողութիւնը չը դադարեցին քաղաքում եւ այս դատից յետոյ. հեռագրատան ծառայող հայերը պաշտօնազուրկ եղան. միաձայն առաջնորդ ընտրուած սրբազան Սրուանձտեանը չ'է հաստատվում Դրան կողմից. մեր կողմերի մի քանի տեղերում Ռուսաստան գնալու անցագիր չ'են տալիս հայերին. Ալաշկերտից ոտքով եւ հակողութեամբ բերվում են այստեղ Նազարէթ աղայի եւ Պ. Հայկունու ընտանիքները Անատոլիայի խորքերը աքսորելու համար եւ վերջապէս դեկ. 26-ին ձերբակալվում են կրկին 3 երիտասարդներ — Վարդան Թիրեաքեան, Մկրտիչ Նատիկեան, եւ Միհրան Մարիմեան։

Ուղիղ է ասած, որ թշուառութիւնը մօտեցնում է մարդկանց։ Ցիշեալ դէպքերի առաջ լուսաւորչականութիւնը, կաթոլիկութիւնը եւ բողոքականութիւնը հետզհետէ կորցնում են իրենց անջատող ոյժը եւ բոլոր դաւանութիւնների հայերը այսօր միանում՝ են իրար հետ ընդհանուրի շահերը պաշտպանելու համար. օրինակները քիչ չ'են, բայց թուելը հեռու կը տանէր մեզ։ Դորա հետ միասին բռնութեանը ընդդիմադրելու դէպքերը օրէց օր շատանում են։ Սիւրմէնէ գիւղաքաղաքի հայ ուսուցիչը իր վրայ յարձակող թիւրք աւազակներին ցրվում է, վիրաւորելով նրանց։ Տեղացի մի քանի եռանդուն գիւղացիք ստիպում են իրենց «մարաբաներին» ձեռք վերցնել դրաւած հողից եւ բաւականանալ պարտքերի կիսովը միայն։ Դեկտեմբերին Շաբին-Գարահիսարում յեղափոխականների ձեռքով սպանվեց լրտես Հաճի Կարապետ վարժապետը։ Նոյն տեղը կատարվել են բազմաթիւ խուզարկութիւններ եւ բանտարկվել են մօտ 20 հոգի. վերջապէս ինքը կառավարութիւնը անուղղակէս պատուիրել է հարկհաններին ոչ մի կերպ չ'նեղել հայերին։

Այդպիսով մի կողմից ազգային շահերի և յեղափոխական կռւի գաղափարը աւելի եւ աւելի է տարածվում

հայերի մէջ, իսկ միւս կողմից կառավարութիւնը, խոստացնելով իր հալածանքները՝ միաժամանակ հարկադրված է եւ կողմնակի զիջումներ անել հայերին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տխուր եւ ծանր պարտականութիւն է ներքին տեսութիւն կազմելը տաճկահայերի դատը պաշտպանող թերթի համար: Տաճկական բանտերի ինկվիզիցի՜ա, քրդական աւարառութիւննե՜ր, թագաւորական պատւով ընդունվող աւազակնե՜ր, խաչ բարձրացած հերոսնե՜ր, բռնի կրօնափոխութի՜ւն, իրենց մայրերի արգանդում գերեզման գտած երեխանե՜ր... պատմութեան խորդ դաւակ հայերի անվե՜րջ նահատակութիւն...

Ո՞ր տեղից սկսենք. ինչո՞վ վերջացնենք: Կարդացէ՛ք մեր թերթի այս համարում տպուած լուրեր եւ թղթակցութիւնները, կարդացէ՛ք արտասահմանեան ուրիշ հրատարակութիւնները եւ կը տեսնէք, որ հազարաւոր աղետալի լուրերը կրկնվում են ամենաճնշիչ միակերպութեամբ: Մեծն Հայաստանից սկսած մինչեւ Կիլիկիա, արեւելքից-արեւմուտք, հիւսիսից-հարաւ՝ նոյն ցաւերը, նոյն աղետները, նոյն դժոխքը: «Կ՚սպանեն քրդեր», «քրդեր կ՚սպանեն», «բռնի կը տաճկացնեն», «երկիւղէն կ՚տաճկանան», «կ՚ վառեն դէզեր», «տաւարը կ՚ քշեն», «բռնի կ՚ բանեցնեն», «կ՚ ծեծեն ու կ՚ բռնաբարեն կանանց» — ահա ինչպիսի՜ արիւնով գրած նախադասութիւններն են անդադար հնչում տաճկահայերի վիճակով հետաքրքրվողների ականջում: Հազարաւոր Չերովզէններ, Ներոններ, Լանկ-Թամուրներ ոտնակոխ են անում մեր Մայր-Հայաստանը, ցըրւում, մաշում կոտորում են հայերին... Ձեռքից գնում է, կորչում է Հայաստանը, կարելի է մտածել այդ սոսկալի երեւոյթների առաջ... Թշուա՜ռ, տարաբա՜ղդ, անպաշտպա՜ն ժողովուրդ. ո՞վ է այն համարձակը, որ քեզ օգնելու համար պէտք է երկիւղ չ՚ունենայ դժոխքը ոտք կոխելու. ու՞ր է այն հսկան, որը զարհուրելի ճնշման տակ, չը կորցնէր բարձրաձայն բողոքելու կարողութիւնը... Ո՞ւր են միւս հայերը. ի՞նչ են անում նոքա այս տագնապի այս ճգնաժամի միջոցին: Թողնելով ամբոխը՝ հարցնում ենք, ի՞նչ է անում մեր նիւթապէս աւելի ապահով եւ մտաւոր կեանքի ճաշակը առած հասարակութիւնը. ինչո՞վ են զբաղված մեր կեանքում որոշ դիրք եւ դեր ունեցող պաշտօնական մարմինները. ի՞նչ է ներկայացնում ընդհանրապէս նոյն իսկ մեր երիտասարդութիւնը...

Դարձեալ տխուր մտածմունքներ, կրկին սեւ գոյներ...

«Եթէ ես համոզված լինէի, որ Տաճկահայաստանը անպատճառ կ՚ ազատվի,» «եթէ մենք ունենայինք Գարիբալդիի նման մի մարդ,» «եթէ գործի գլուխ անցնէին փորձված ու դիրք ունեցող մարդիկ», «եթէ մի բան արդէն արուած լինէր եւ այլն եւ այլն՝ մենք չ՚էինք խնայիլ ոչ մի տեսակ զոհաբերութիւն» — լսվում է ամէնայն օր մեր հասարակութեան մէջ հազար ու մի տեսակ վարիացիներով: Հաւատալ այդ խօսքերի անկեղծութեանը, բացատրել այդ անհեթեթութիւնները պատմական երեւոյթների վերայ գաղափար չ՚ունենալովը թէ այդպէս են խօսում մահաշունչ բերաններ, որոնց ժպիտներից անգամ օձեր կարելի է քաղել, բայց եւ այնպէս ներկայիս դրութիւնը հետեւեալն է. որովհետեւ պարոնները «համոզված չ՚են,» որովհետեւ «Գարիբալդի չ՚ունինք,» ինչպէս չ՚ունէին եւ իտալացիք իրենց ազատութեան նոյնանման շրջանում. որովհետեւ «փորձված ու յայտնի մարդկանց» պահանջը այնքան առաձգական է, որ միշտ կարելի է չը բաւականանալ ձեր տուած անուններով. որովհետեւ վերջապէս գերի տաճկահայը առաջին ապստամբական քայլերը անպայման յաջողութեամբ «դեռ չ՚է արել». ուստի մեր հասարակութիւնը հրաժարվում է որոշ ներգործական դիրք բռնելու իր ազգի եւ հայրենիքի վերաբերմամբ: Ակամայ մտաբերում ես անմահ բանաստեղծի խօսքերը. «Ա՜խ, ինչպէ՞ս կ՚ուզէի... միայն այդ չը բաժանէր ինձ իմ կոպէկէն:» Ի՞նչ արած. երեւի մինչեւ Տաճկահայաստանը չ՚ազատվի հայը մարդ չի դառնալ...

Միւս կողմից իրերի այս տխուր միջոցին ժողովրդի շահերը պաշտպանելու հրաւիրված Պօլսոյ պատրիարքարանը Աշըեանի՝ գիշատիչ էֆէնդիների եւ սեւարիւն վաշխառուների այդ ներկայացուցիչ պատրիարքի բերանով կամենում է համոզել հայ ժողովրդին, որ նրա դժոխքը արքայութիւն է; նրա տատասկոտ ուղին կանաչազարդ մարգագետին: Մենք խօսում ենք, ի հարկէ, այն կոնդակի մասին, որը կարդացվեցաւ Տաճկահայաստանի բոլոր քաղաքների եկեղեցիներում: Այն ժամանակ, երբ մեր հայրենիքի ամէն մի անկիւն ներկվում է աշխատաւոր հայի անմեղ արիւնով. այն ժամանակ, երբ դէպի հայը կատարվող անգթութիւնները հասնում են իրենց գագաթնակէտին. վերջապէս այն ժամանակ, երբ օտարազգիք անգամ հայի այս չափ թշուառութիւնները ամօթաբեր են համարում մեր ազգութեան համար, այդ միջոցին հայ ժողովրդի կրօնական քաղաքական ներկայացուցիչը աղաղակում է. «զերծ մնացէ՛ք որոմներից, հեռու եղէ՛ք այն ամէնից, ինչ կարող է կասկածանքի ենթարկել հայ ազգի դարեւոր հպատակութեան զգացմունքը...» Ի զուր չ՚է կարծում մի հեղինակ, որ աշխարհիս ամենաուժեղ թոյնը մարդուս համար՝ իր սեպհականն է. այդպէս ահա Պատ. Աշըեանը իր ազգի ամենադժբախտ շրջաններից մէկում զբաղուած է պատմութեան մէջ իր համար անէծքների էջեր հարստացնելովը:

Դառնանք վերջապէս մեր երիտասարդութեան: Մեր

սիրտը սեղմվում է հարցի քննչութեան առաջ, բայց եւ անկարելի է բարձրաձայն չը խոստովանել, որ մեր երիտասարդութիւնը ընդհանրապէս, այսինքն մեծ մասամբ, ստոր յայտնվեցաւ այն խնդիրների առաջ, որոնց լուծմանը աջակցելու նրան հրաւիրում են ժամանակը եւ պատմութիւնը։ Սարսափել՛ի իրողութիւն, բայց ճիշտ իրողութիւն... Մի կողմ թողնելով այդ անարժան մեծամասնութիւնից նրանց՝ որոնց փայտեայ կուրծքը եւ փակ հոգին միշտ անշարժ կը մնան ազգային ու հասարակական պահանջների առաջ, դիմենք գործին այս կամ այն չափով աջակցել ցանկացողներին։

Ո՛րքան ամօթաբեր հակումներ, ո՛րքան հոգեկան չքաւորութիւն, ո՛րքան այլանդակ տիպարներ... Ահա մէկը կամ նոյն իսկ մի ամբողջ խմբակ, որի համար հայկական շարժումը, լոկ անձնական դիրքի, անձնական գերիշխանութեան անտէր ասպարէզի հարց է. կուրութիւնը այն տեղ է հասնում, որ ամէն քայլափոխում մոռացվում են թէ ամէնապարտաւորեցուցիչ մարդավայել սկզբունքները եւ թէ գործը, ամբողջ գործը։ Ահա մի ուրիշը, որը, խառնելով յեղափոխական գործը պայքարից ժառանգած թեթեւ ու անվտանգ ազգասիրութեան հետ, ընդունակութիւն չ'ունի ոչ գործը հասկանալու եւ ոչ առաւել եւս նրա պահանջներին հետեւելու։ Երրորդը, թողած իր անմիջական թշնամիներին, զբաղված է իր հետ տարակարծիք իր հայ եղբայրների հետ մահու կռիւ վարելովը։ Չորրորդը, որ երէկ խօսում, շարժվում, տաքանում, ուրիշներին մեղադրում էր անգործութեան կամ դանդաղութեան մէջ, այսօր, երբ յայտնուեցաւ, որ յեղափոխական ուղին փափուկ կարպետներով չ'է փռուած. այսօր, երբ հասարակութեան ցնցված տրամադրութիւնը իջել է, — այդ չորրորդը, ասում ենք, այսօր ամէնալրբաբար, կարծես յաղեցած իր պատճառած վնասներովը, յետ է քաշուել, մոռացել է ամէն բան։ Վերջապէս հինգերորդը յեղափոխական գործը բացարձակապէս իր համար շահախնդրութեան ու թեթեւ կեանք վարելու յարմար միջոց է համարում։

Ա՛յո, մեր երիտասարդութիւնը ունի մի որոշ մաս, որի շրջանում մի փնտռէք ոչ գործի համար անհրաժեշտ դիսցիպլինա, ո՛չ հաւաքական մարդավայել գործնէութեան զգացմունք, ո՛չ միանգամից ընդունած յեղափոխական սկզբունքի բոլոր հետեւանքներից չըխուսափելու կարողութիւն, ո՛չ պատշաճ շրջահայեցողութիւն, ո՛չ տարրական ազնւութիւն անգամ...

Անբաղդ հայրենիքի անարժա՛ն որդիք, անպաշտպան մօր սո՛րուկ զաւակներ...։

Իսկ թշնամի՞ն... Իսկ առանց այն էլ հզօրագոյն մեր թշնամին ամրացնում է իր սահմանները, ամէն կերպ սաստկացնում է ժողովրդի ճնշումը, հայի անվարձ աշխատանքով նորանոր զօրանոցներ է կառուցանում եւ քիւրդերից զօրք կազմելով՝ երկրի պահպանութիւնը յանձնում է հայութեան այդ դարաւոր թշնամիներին...

Սակայն այս ո՞ւր հասանք. շարունակ աննպաստ երեւոյթներ, շարունակ բացասական պայմաններ. միթ՞է այդքան տխուր է իրերի վիճակը, այդքան խաւար մեր ներկան. միթ՞է մեզ մնում է բացագանչել՝ «մեռ՛իր, խեղճ հայրենիք, որդիքդ սիրտ չ'ունին։»

Իհարկէ, այն ժամանակ, երբ Հայաստանը հազարաւոր վէրքերից արիւնաքամ է լինում, այնպիսի մի սուր ժամանակ, երբ պէտք է վճռուի հայութեան ապագան՝ յիշած երեւոյթները առանձնակի նշանակութիւն են ստանում, ճնշում են ամէն մի ճշմարիտ հայրենասիրի սիրտ առանձին ծանրութեամբ։ Բայց բարեբախտաբար անզգայ բուրժուան, դաւաճան պատրիարքը, անարժան երիտասարդ չ'են, որ որոշում են իրերի դրութիւնը, լուսաբանում են մեր ներկան. դոքա չ'են, որովհետեւ դոքա ազգ չ'են կազմում։

Բերած երեւոյթների հետ զուգընթացաբար այսօր մեր աչքի առաջ են նաեւ ուրիշ գոյն կրող, ուրիշ լեզւով խօսող ու աւելի զօրեղ պայմաններ։ Կասկած չէ կարող լինել թէ որ կողմը յաթող կը հանդիսանայ։ Նախ՝ ընդհանրապէս դատապարտելի մեր երիտասարդութիւնը այնուամենայնիւ իր միջից դուրս բերեց մի փոքրամասնութիւն, որը դիմաւորեց իր ազգի մեծ դատին աւանց տատանմունքների։ Այդ մասն է, որ միախառնվելով ժողովրդային հոսանքին՝ յանձնել է իր կեանքը պատմական անխուսափելի ալիքներին. դա է, որով ապրում է յեղափոխական կազմակերպութիւնը. դա է, որ մի կողմից անընդհատ դիմադրում է հասարակութեան անտարբերութեանը եւ միւս կողմից գործի մէջ, ամբոխի հետ շփվելով, նորանոր կայծեր է նետում ժողովրդական կեանքի բորբոքված մթնոլորտի մէջ։

Բայց եւ այդ երիտասարդութիւնը չ'է, որ կազմում է այսօր մեր ազատութեան գաղափարի յ ե ն ա ր ա ն ը։

Այդպիսի յենարան կարող է լինել միայն ինքը տաճկահայը, տաճկահայ ամբոխը, որի կեանքը այսօր լի է նշանաւոր արտայայտութիւններով։ Ահա ձեզ պատանի հասակում հայ օրիորդը, որը սպառնում է հարազատ հօրը իր կուսական ձեռքով մեռցնել՝ թէ նա համարձակէր դաւաճանել հայրենիքի սուրբ կռուին։ Ահա հայ գեղջկուհիներ, որոնք ցուրտ ձմրանը կըտուրի վերայ դիտում են շուրջը, որ ներսը անվտանգ կայանայ յեղափոխական երիտասարդների խորհուրդը։ Ահա մի քանի հասակաւոր կանայք, որ պարծենում են իրենց ամուսինների հետ միասին հրացանների գործածութեամբ ամէնավտանգաւոր մի ճանապարհի վերայ։

Կարդացէ՛ք, այս համարի լուրեր ու թղթակցութիւնները։ Ալաշկերտում հայ հրոսակային խումբը հերոսական պատերազմ է մղում մի ամբողջ օրուայ ընթացքում հարիւրաւոր զինուած քրդերի հետ, պատռում է նոցա ահռելի շղթան ու գիտակցական նահատակների արիւնով ցօղում է Հայաստանի հողը։ Օ. գիւղը քշում է ամբողջ 200 հոգի զինուած քրդեր։ Կարինում Շամիլի խումբը իր համարձակ քայլերով արհամարում է թշնամու վտանգը։ Վանում սպանվում է առելի պաշտօնեան։ Շաբին-Կարահիսարում մահով է վարձատրվում Հաջի Կարապետ ուսուցիչը իր մատնութիւնների համար. Տրապիզոնի շրջակայքում գիւղացիք սպառնալիքներով ստիպում են վաշխառու էֆէնդիներին զիջանել իրենց պարտքերի ամբողջ կէսը։ Պատրիարքը պնդում է իր կոնդակում, որ բոլորովին ժամանակ չ'ունի ներքին գործերով զբաղվելու — այնքան անհանգիստ է ժողովրդի քաղաքական տրամադրութիւնը։ Քիւրդը, որի անունից մօտիկ անցեալում դող էր ընկնում հայի սիրտը՝ այժմ կասկածելով, որ այս կամ այն հայ գիւղում հրացաններ կարող են լինել՝ ծռում է ճանապարհը, հեռւով է գնում. Կառավարութիւնը կարգադրութիւններ է անում երկրի խաղաղութիւնը պահպանելու համար հարկահանութեան ժամանակ հայերի հետ մեղմ լինել։ Բանտարկւողների աքսորվողների թիւը օրից օր աւելանում է. յիշենք հանճարաւոր մաղկանց կարծիքը. «բանտերը գաղափարի օրօրաններ են, իսկ նահատակները ազատութեան հրդեհի վառելիք։» Իսկ ընդհանրապէս տաճկահայերի գիտակցութեան մէջ վերջին տարիներում կատարված հսկայական փոփոխութի՞ւնը, — այն փոփոխութիւնը դէպի քաղաքական մտքի հասունութիւնը, որը 40-ական թուականներից մեր ամենանշանաւոր հայրենասէրների իդէալն էր կազմում. Ալաշկերտից գրում են՝ «ժամանակները փոխվել են...» Վանից՝ «ժողովրդի տրամադրութիւնը սպառնալից է...» Նոյնն է Մշում, Կարինում, Բիթլիսում։ Ցիշեցէք Դրօշակի նախընթաց համարի ներքին տեսութիւնը։ Ահագին տարածութեան վրայ ամենայն տեղ սիրով ընդունել եւ աջակցել յեղափ. գործիչներին, Ը ն կ ե ր ո ւ թ ե ա ն ը միշտ օգնելու պատրաստականութիւն յայտնելը, յեղափ. խմբեր կազմելը եւ այլն այժմ ընդհանուր երեւոյթներ են տաճկահայերի կեանքում։ Ամէն տեսակ զոհողութիւնների պատրաստականութիւնը աչքի է խփում հայ ժողովրդի, հայ ամբոխի մէջ եւ Տաճկահայաստանից դուրս, յաճախ շատ հեռու անգամ...

Իսկ եթէ այդպէս է՝ կարելի՞ է արդեօք չափել միլլիոնաւոր ժողովրդի կամքի ամէնակարող ոյժը. կարելի՞ է արդեօք չը նախազգալ ապագայի մեծ դէպքերը... Գիտէ՞ք, ընթերցող, ինչպէս է նայում Հէյնէի հանճարը ամբոխի ու նրա ոյժի վերայ։ Ամբոխը, ասում է նա մօտաւորապէս, այն «մեծ յիմարն» է, որի գլուխը թակել, որի համբերութիւնը 'ի չար գործ դնել կարելի է, ինչքան եւ կամենաք. դա այն «մեծ գլխանի անմիտն» է, որին աներկիւղ կերպով կարող էք զրկել, արհամարել եւ հարստահարել, ինչքան հարկաւոր է ձեզ. Նա մեծ մասամբ այդ ամէնի համար շնորհակալ էլ է լինում ձեզանից։ Բայց Աստուած մի արասցէ, եթէ «մեծ յիմարը» հանաքի համար անգամ՝ սկսի բարկանալ. Նրա բազուկը այնքան ուժեղ է, նրա մարմինը այնքան հսկայական, ձայնը այնքան որոտալից, որ թեւի մի շարժուածքից, գլխի մի թափահարումից, ձայնի մի որոտումից գահեր են կործանվում, տէրութիւններ են խորտակվում, իշխողներ-դատաւորներ են տապալվում, երկրի բոլոր միւս ձայները լռվում են... Օ՛, շատ վտանգաւոր, սարսափելի վտանգաւո՛ր է այդ «մեծ յիմարը» իր «ցնցումների» ժամանակ...

Հայ ժողովուրդը, հայ ամբոխը, «հայ-մեծ յիմարը» դարերով տանջվել եւ լռել է, դարերով կեղեքվել եւ համբերել է. բայց... բայց այսօր ն ա ց ն ց վ ե լ ո ւ վ ր ա յ է... Թո՛ղ դողան ուրեմն նրա թշնամիները, որոնց անկումը անխուսափելի է. Թո՛ղ կասկածանքով թունաւորվին նրա արիւնը արբողները, որոնց օրերը հաշւած են։ Անպարտելի փոթորիկի նման կ'անցնի հայ ժողովրդի զայրոյթը ահագին տարածութեան վրայ, կը փշրէ, կը խորտակէ այն ամէնը, ինչ խեղդում է նրա կեանքը ու տաճկա-քրդական ռեժիմի փլատակների վերայ կը պարզէ իր ազատութեան յաղթական դրօշակը...

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՑ

Մահու պատիժը հայերի վերաբերմամբ ընդունվում է միմիայն անպայման ապացուցված դաւաճանութեան դէպքերում։

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ներկայ համարից սկսվում է տպագրութիւնը այն նուիրատւութեանց, որոնց մասին խոստացվել է։

1890 թ. Օգոստ. ի 1ից։ Բ. Ն. Շ. Ի, – 5500 ր. Նոյ. 1ից Դմատ – 100 ր. ՆՆ, 7 ր. Աա – 12 ր. Ծառ – 41 ր. Կայծիկ – 75 ր. Փունջ – 74 ր. ԱՓ – 27 ր. Բ – 4429 ր. 18 կ. N 100 ր. X 200 ր. N 40 ր. Խ 41 ր. Տիկին 516 ր. Գխ 6 ր. ***553 ր. Նբ 50 ր. Կայծիկ – 190 ր. Խմբ N 1–41 ր. Գկ 130 ր. **460 ր. Փունջ 36 ր. Խմբ N 1–62 ր. N լիս 5 ր. 1891 թ. Յունվ. 1-ից * – Իս 150 ր. Դար 300 ր. Իւ 68 ր. Ն-ի 450 ր. Կայծիկ 80 ր. Խ. գիւղ 80 ր. Վ. գիւղ 200 ր. Ա. գիւղ 84 ր. Աք – 136 ր.

(կը շարունակուի)

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թղթակցութեան եւ նուիրատւութեան համար դիմել.

Docteur Longo, 12 Rue de Puteaur, Paris.